ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 073- 187

11 հուլիսի 2011թ.

0231-6-09-36
գ.Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ի պատասխան Ձեզ է ներկայացվում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2011 թվականի հունիս ամսվա ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր՝ 8 թերթ:

Համայնքի ղեկավար՝ [redacted]գորյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 6991-11
«14» 07 2011 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

03 հունիսի 2011թ. Թիվ 13

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 12
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյանի 2011 թվականի ապրիլի 6-ի թիվ 01/12/1045-11 գրությունը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ավագանու 2011 թվականի մայիսի 18-ի թիվ 30 որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 12 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1)որոշմամբ հաստատված N 1 հավելվածում՝ «Իրավունքներ և պարտականություններ» բաժինը լրացնել նոր կետերով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ [illegible]յան

2011 թվականի ապրիլի 27
գ. Արշալույս

Հավելված
Armavirի մարզի
Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի
2011 թվականի հունվարի 31-ի N-13-Ա որոշման

ԼՐԱՑՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 27-Ի ԹԻՎ 12 ՈՐՈՇՄԱՆ

1. Սահմանված կարգով արձանագրում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստերը, կազմում է համապատասխան եզրակացությունները և ներկայացնում է համայնքի ղեկավարին:

2. Սահմանված կարգով արձանագրում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի աշխատանքներին առընչվող փաստաթղթաշրջանառություն, համապատասխան գրանցամատյանների վարումը և դրանց պահպանումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

03 հունիսի 2011թ. Թիվ 14

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հուլիսի 30-ի N 479-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետով և 2002 թվականի փետրվարի 2-ի N 88-Ն որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Ա. Ղահարամանյանի 2011թվականի հունիսի 1-ի թիվ 01/04/1654-11 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Փոխել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի բնակիչ Վարդան Վարդումյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի 20-րդ փողոցի թիվ 1/1 հասցեում գտնվող տնամերձ հողամասում կառուցված մառանի զբաղեցրած 74.5 ք/մ տարածքի գործառնական նշանակությունը՝ փոխել առևտրի սրահի:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ [redacted]ության

2011 թվականի հունիսի 3
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

14 հունիսի 2011թ. Թիվ 15

ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, « Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներով և հաշվի առնելով որ կառույցը իրականացվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված 22-րդ կետի 1-ին ենթակետին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Վերականգնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույսի գյուղական համայնքի 3 փողոցի թիվ 24 հասցեում գտնվող Արտաշես Վաղինակի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը կից զբաղեցրած հողամասի հողհատկացման հիմքերը 134.0 քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 934.0 քմ հողամասի և հողամասի վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2.Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճար չի սահմանվում:

4.Առաջարկել Հայաստանի Հանրապետությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացի Արտաշես Վաղինակի Կոստանյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի և շենք-շինությունների նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի [illegible] վկայական:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում [illegible] պահից:

Համայնքի ղեկավար՝ [illegible]իգորյան

2011 թվականի հունիսի 14
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

20 հունիսի 2011 թ. Թիվ 13

ԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Աննա Առաքելյանի նկատմամբ կիրառել խրախուսանքի միջոց՝ միանվագ դրամական պարգևատրում՝ 20000 (քսան հազար) << դրամ:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Հ.Գրիգորյան

2011 թվականի հունիսի 20
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

21 հունիսի 2011 թ. Թիվ 14

ԱՐՏԱՎԱԶԴ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 112-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Արտավազդ Ասատրյանի 2011 թվականի հունիսի 7-ի ծանուցումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2011 թվականի հունիսի 21-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի օգնականի հետ 2009 թվականի սեպտեմբերի 3-ին կնքված N 12 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով իր զբաղեցրած պաշտոնից:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար՝ Հ.Գրիգորյան

2011 թվականի հունիսի 21
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

21 հունիսի 2011 թ. Թիվ 15

ՀԱՄԼԵՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 112-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Համլետ Ալեքսանյանի 2011 թվականի հունիսի 8-ի ծանուցումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2011 թվականի հունիսի 21-ից լուծել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի տեղակալի հետ 2011 թվականի ապրիլի 1-ին կնքված N 15 աշխատանքային պայմանագիրը՝ ազատելով իր զբաղեցրած պաշտոնից:

2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Զ.Գրիգորյան

2011 թվականի հունիսի 21
գ. Արշալույս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՇԱԼՈՒՅՍ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

21 հունիսի 2011 թ. Թիվ 16

ՀԱՄԼԵՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածով, <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Համլետ Ալեքսանյանի 2011 թվականի հունիսի 16-ի դիմումը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1.2011 թվականի հունիսի 21-ից կնքել աշխատանքային պայմանագիր Համլետ Ալեքսանյանի հետ նշանակելով նրան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արշալույս գյուղական համայնքի ղեկավարի օգնականի պաշտոնում:

2. Աշխատավարձի վճարումն իրականացնել համաձայն հաստատված հաստիքացուցակի՝ 80000(ութսուն հազար) ՀՀ դրամ:

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Համայնքի ղեկավար Հ.Գրիգորյան

2011 թվականի հունիսի 21
գ. Արշալույս